


# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

## Ս. ՂԱԶԱՐՈՒ

— 7 —

Ա. ԳՐԱԴԱՐԱՆ ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱՅԻ  
Միկիթար՝ զոր ազգն ողջունեց իրուն  
հայր իր վերածնունդին և երկրորդ լոււ  
սաւորիչ՝ այն մեծ հանճարներէն է որոնց-  
մէ առուելի պէս կը խուսան զարերու  
յեղաշըռութեան հետքերն անզամ ու ժառ  
մանակի աւերութները։

ամէն հայու, ո՞րչափ ևս առաւել իր հա-  
րազատ զաւակներուն որ իր իսկ սիրով  
և արցոնքով կերտած չնաշխարհիկ մե-  
նաստանին մէջ՝ կ'ապրին նոյն ոգւով  
յաւերժացնելու նոյն զործը, և այսօր սի-  
րախառն հանդէսներու, յորելինական տօ-  
նախմբութիւններու պահուն՝ խանդավառ



Գրադարան նագուալ Արթիթ Փաշայի (Ս. Ղազար)՝  
(= Անեսկ Պայրեսէն)

Ան իր աննկուն կամքով, ստեղծող  
մոքով և խորաթափանց հեռատեսու-  
թեամբ՝ նրացած ու սրբացած զերբնաւ-  
կանին օժումով՝ կրկնապէս մեծ է կրօնքի  
և հայրենիքին առջև, տիպար մը որ հան-  
ճարներու մէջ իսկ եզական է և հազուաւ-  
զիւտ։

Եթէ Միկիթարայ ծննդեան 250 ամեա-  
կը երկնացնցուող շառափ մ'է բերկրառիթ

ոգով և ցնծութեամբ է որ փառքի պսակ  
մը կը յաւելունց որդիքս՝ մեր անմահ  
Հօր սուրբ ճակտին. պսակ մը անշուշտ  
վարձք այն կրօնասէր և ազգասէր ուռոյն՝  
զոր իրմէն կը ժառանգենք. պսակ մը որ  
միանգամայն մեծահոչակ ցոյց մ'է այն,  
համալրանցին՝ զոր կ'ազդեն մեծ լուսա-  
նորոգին որդիքը՝ ինչպէս երբեմն իրնց  
հայրը, ու այսպէս զործերը կը վկայեն

թէ կենդանի է միշտ ու կ'ապրի Միսիթար:

Ազնիւ ու չընաղ զահլիճ մ'է այդ պատկը, նոր բաժին մը այն մատենագարանին զոր Միսիթար երկու դար առաջ՝ իր հանձարով յդացել, գծեր ու կանգնեց է, շըեղ, փառացի, ճոխ ու վսեմ ինչպէս իր հոգին. Մատենագարան մը՝ որ Ս. Ղազարու մենաստանէն աւելի կարծես արցունի պալատի մը փացն ու պերճանը ըրկնար ըլլալ արժանապէս:

Եւ հոս հարկ է խորին երախտագիտութեամբ արձանագրենց և հոչակենց այն մեկնամները, որոնց ինքնայօծար, առատածիր նուէրներով կանգնեցաւ այս նոր Մատենագարանը՝ որ իր մէջ կ'ընդգրկէ անգիտացի մեծ ցերթողին՝ Լորտ Պայրընի սենեակն ալ:

Զքարինան ազնուազարդ հարազատներն են անոնց<sup>1</sup>, օտար հորիզոններու վրայ փայլող հայութեան պատուարեր զոյց մեծ գէմքեր, որոնց նորորինակ մրցումով ասպարեզ կ'ելլէին ցուցնելու իրենց սրաին խորին յարզանցն ու սէրը առ Միսիթարեան Միարանութիւնը, և իրարու ձեռքնոտու և լրացուցիչ հանդիսանալով կանցնեցին նոր զահլիճ՝ չընաղ և ազնիւ զրադարաններով և զայն պեճեցին թանկազին հատորներով. ու այսպէս թողին անոնց անման յիշատակ մը իրենց բարերար անուան, պատուարեր կոթող մը և նուէր մը իրենց զարմին, շահելով հուսկ երախտագիտութիւնը ամրող Միարանութեան և մեզ հետ ամրող Ազգին:

Երէց եղայրը, Եպուու Արթին Փաշա, կտակած էր իր ամրող թանկազին և ճոխ զբաղարան՝ Միսիթ. Միարանութեան, և իր զուտարը կատարինէ փութաց շուրջ 3000 հատոր կազմող հաւաքածոն 60 մեծ արկեներու. մէջ ամփոփած՝ Եզիպտոսէն Վենեսիկ դրկել, իննամուն հոգածութեամբ կարգաղբելով ինքնին զետեղումը և յզումը:

<sup>1.</sup> Իրենց մանկութեան օրերուն մասն Միսիթարան դասախրակութեամբ Մուրատեան Վարժարանին մէջ է Փարփու:

Կը բովանդակէ մի քանի արարերէն ձեռագիր Ղուրանին կամ Օրինագրերերու. կան դարձեալ արարերէն շուրջ 150 հատորներ, որոնց մէջ ինչ ինչ հազուագիւտ:

Մակայն թանկազին գոհարները կը կազմն, Collection Orientale—manuscrits inédits, 7 հսկայ հատոր Արար—Ֆրանս. — Miniatures persanes 2 հո. — Arabian nights. 10 հո. (Arabian nights) Supplemental nights, — Oriental translation fund. 12 հո.

Tableau général de l'Empire ottoman dédié au roi de Suède (Gustave III), 3 հսկայ հատոր. Ասոնցէտ աւելի կարեոր և հետացըրբական են Մémoires... de l'institut français d'Archéologie orientale du Caire, 48 հատոր. ինչպէս նաև Մémoires... de la mission archéologique française au Caire, 42 հատ. դարձեալ իրեկ կարեոր հաւածոյ Bulletin de l'institut égyptien, 36 հատ. և Bulletin des lois et décrets égyptiens 38 հատոր. ասոնց հետ Եգիպտոսի որիշ պետական վաւերագիրներ Recueil de tous documents officiels du gouvernement égyptien, 33 հո. — Biographie universelle ancienne et moderne, 85 հատոր. — Encyclopédie moderne, 17 հատոր. — Histoire de l'Empire Ottoman, 18 հատոր. և երկայն շարք մը երկելի հետինքներու. Karamsin, Michaud, Plutarque, Norvens, De Ségur, Balzac (22 հո.), Guizot, Fllassau, Martens (38 հատոր) ևն, ևն:

Թանկազին շարք մ'է դարձեալ Catalogue général des antiquités égyptiennes du Musée du Caire (ապ. Caire — Berlin — Vienne), 65 հատոր. Ասոնց կարգին են մեզ համար հետացըրբական՝ Recueil des historiens des Croisades Occidentaux — Orientaux (arm-grec.) 13 մեծադիր ասուար հատորներ. արկելեան բաժնին մէկ հատորն հայկականն է, 3 հատոր ալ յունարէն. հայկականի բնագիրն ունի քովը Փրանս.

Թարգմանութիւն և ընդարձակ ծանօթութիւններ՝ Տիլորիէ խնամքով պատրաստուած միայն այդ հատորը 847 էջ է:

Հուսկ կ'արժէ յիշել նաև քանի մը մեծագիր հսկայ գործեր ալ, որոնց հազուազիւտ, են իրենց տեսակին մէջ. Catacombes de Rome, Jérusalem, հրաշալի գունագեղ նկարներ տեսարաններու և տառապաներու. նոյնպէս Քէլէկան հրատարակութիւնները. The Alhambra palace, L'Art arabe, և ամենէն աւելի հետաքրքրական Description de l'Egypte publiée par l'ordre de sa Majesté l'empereur Napoléon le Grand, անոր կատարած մեծ արշաւանքին հետագութիւնները 11 մեծին հատորի մէջ. գարենալուրիշ շարք մը առաջինէն ըիշ մը փոքր դիրքով Description de l'Egypte, նոյնպէս մեծին Նաֆուլէսի հրաշ մանով ապուած թանկագին գործ. և երեց ամենամեծ հատորներ՝ որոնց անզին են ստուգիւ նոյնպէս Description de l'Egypte հակայական մեծութեամբ (1,10 × 0,80), ուր կարելի չէ առանց զմայլանքի և յուզման զիտել ՄԵմոնիուսի, Լուբսուրի, Քանանգի և Տենտիւրիսի հրաշակերտ ները վիմատիպ աննման քարտէսներովն Դեռ կարելի էր թուել ուրիշ թանկագին գործեր ալ, սակայն այսքանն ալ կը բաւէ Գրադարանին ճոխութեան փոքրիկ զաղաւ փար մը տալու. չմոռնանք յիշել որ զրեթէ բոլոր հաւաքածոն շըեղատիպ և փառակազմ է:

Այս գանձերն արժանապէս ամփոփելու և պահելու դատին համար էր որ միւս եղայրը ալ, թուսէփ Արթին պէյ, կը փութար ազնուական և բարի նախանձով մը արամագրելու հարկաւոր գումարը, 15000 ֆր. որով ըիշ ասենի մէջ կանգնեցաւ Մատենադարանը ազնիւ փայտէ, վենակիւան նուրբ ճաշակով յօրինուած:

Այսպէս նոր Մատենադարանի մասին, որուն պատկերը ներկայացուցինք ըիշ առաջ:

Բիս Մատենադարանի միւս մեծ բաժիններուն վրայ՝ համառոտ տեղեկութիւններով:

#### Բ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԲԱՃԻՆ

Կը բովանդակէ մեծ գրատունը և երկու յաւելուածներ՝ ամփոփելով շուրջ 66,000 հատորներու պատկառելի թիւը, (շուրջ 40,000 մեծ գրատունը, 26000 ալ միւս երկութը). հարստութիւնն ալ գովեստի կամ հոչակի անկարօտ է. հայուն է ատոր պարածանցն ալ, եւրոպացի մծամիծ գրապետներ և ուսումնասէրներ զայն այցելած պահուն գովեստին հետ նախանձով կը նային այդ անզին գանձին, այսօրուան 66,000 հատորներու լեգէոնը երկու դարու բրախնրով ու ջանցով ժողվուած, հայթայթուած հարստութիւն մ'է. երկայն պիտի ըլլար թուարկել թանկագին պրակները՝ որոնք կայսրերու, թագաւորներու, և մեծամիծ անձնաւորութեանց և հեղինակներու լոկ իրեք նուէր կամ յիշատակ անզամ նկատելով՝ արդէն մեծ փառք մը պիտի կազմէին Միիթարայ Տան, առանց խօսելու այդ գործերուն զիտական և տպագրական արժէրին վրայ: Հոն կը բովանդակուն բոլոր կարեռ հեղինակութիւնները, հին ու նոր, թունական և Հոռվմէական, միշտագրեան և արդի բոլոր մատենագիրներուն, բոլորն ալ փառակազմ և ինամցով պահուած:

Հեղինակներ, տպարաններ, ընկերութիւններ, ճեմարաններ՝ հոն ունին իրենց բաժինը և յիշատակը՝ զրոշմուած գրքերու ճակտին: Համառոտիւ յիշենք գէթ քանի մը երեւելի և ցայտուն դէմքերը իրենց նուէրներով. այսպէս

Ուստիոյ ինցնակալներ նկողուս Ա. և Ալեքսանդր Բ. Codex Sinaiticus լուսատիպ այն թանկագին և սակաւաթիւ օրինակներէն՝ որոնց բաժնուեցան հին և նոր աշխարհի առաջնակարգ մատենադարաններուն և Wladimir Stassoffի l'Ornement Orientale.

ՆԱՓՈԼԻՇՆ Գ. 1) Expédition scientifique, 8 հո. թանկագին յուշարձան ֆր.

\* \* \*

Անցնինք այժմ խօսելու Մայրավանդ

քանիսկի Եղիպտոս արշաւանքին, ինչպէս նաև 2) իր հեղինակութիւնը Vie de J. César. 3) ամբողջ լատինական Մատենագրութիւնը ad usum Delphini, տպ.

Կիշօ Լուի Ֆլիփի նախարարը՝ Գաղղրական մատենագրութեան մեծ մասը.

Գր. ԱՐԵՐՈՒԽՆ Գաղղ. Մատ. ուրիշ մաս մը (նույրելով հանգուցեալ Գերա. իզնատոս կիւրեեան Արքահօր՝ որ հայերէնի դասատու եղած էր իրեն).

ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆՈՍ ԱՐԴԻԴՈՒՔԸ՝ եղբայր Հանգուցեալ միր. Եռվաէփի, բանի մը թահագին հատորներ.

Ինչպէս նաև ԼՈՒԴՈՎԿԱՆՈՍ իշխան Պավերայի.

ԳԱՂԼՈՑ են ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ձԵՄԱՐԱՆՆԵՐԸ.

ՏԻՒԲԱՆԱՌՈՒ՝ իր բոլոր գործերը.

ԻՏԱԼԻՈՑ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ՝ զանազան անգամներ՝ մեծ և շքեղ գործեր.



Մատենագրաժ Միկթարնածց — (Ա. Ղազար)

ԿԻՒՍԱԿ Դ. ՇՈՒԷՇԻ՝ Ջանդէի շքեղ տպագրութիւնը կիւստաւ Յօրէի պատկերով:

ՑՈՎՍԵՓԻՆԱ. Մայր Թագուհի Շուետ-Նորուեկիայի, իր այցելութեան առթիւ ի Ա. Ղազար 1875ին՝ նույրած է Շուետ-Նորուեկիայի Ասկար Ա. Ղարուս Ժի և Ասկար Բ Թագաւորներուն բոլոր թանգագին գործերը:

ՔԱՄՔՆ ՍԻԼՈՒԱՆ՝ Ռումանիոյ քերթող շշնո՞ն՝ իր քերթողական և վիպական գործերու շքեղատիպ, փառակազմ հատորները:

ՎԵՆԵՏԻԿ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ՝ և ԳՈՒՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆ՝ ընտիր և մեծ գործեր.

ԵԱԳՈՒՊ ԱՐԹՈՒ ՓՈՅՑ՝ ընտիր հատորներ եւրիշ Բանկագին նույրելու հետ (վերջին մեծ կոսկէն զաա):

ԻՇԽԱՆ ԱՊՐՈ իր ընտանեաց Աստուածաշունք, որոն ձեռագիրը, թէպէտ Ժէզարու, սակայն ամենէն ճորի և ընտիր զարդանկարներով մինչ է, կրնայինց շարել հոս Վ. Լանկուա, լը Վայեան տը Ֆլորիփալ, Թումազէօ և անթիւ մեծահոչչակ հեղինակներ. բայց առատաձիր նույրներ եղած են ֆրանս. Պետութեան կողմէ Մուրասան

վարժարանի (Թարիգ) միջոցաւ, թէ՛ վանդիս և թէ վարժարանին բազմաթիւ գործեր, շատ անգամներ, լի մեծ արկաներով. ինչպէս նաև իրնէսա Շանթիի կողմէն՝ (Արևի Թանգարանին տեսուչ) երկու մեծ արկղ Antropologie և այլ ընտիր երկեր։

Այս առթիւ կը յիշենք երախտագիտութեամբ նաև հանգուցեալ Գր. Մալիասեանի քրոջ Օր. Թերեզայի նուէրը, շուրջ 70 հոտ. հայերէն և 200 ալ ֆրանսերէն, ինչպէս նաև շատ մը ազգային միութիւններու, զբաղվածառանցներու և անհատներու նուէրները, որոնցմով օրէ օր կը ճոխանայ Մայրավանքիս Ընդհանուր Մատենադարանը։

#### Գ. ՀԱՅ-ԵԽՐՈՊԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

Կը բովանդակէ 4000 հատոր, ասոնք ընդհանրապէս հայ աշխարհի, հայութեան և հայկական հարցերու շուրջ գործեր են. թէ՛ հայ և թէ օտարազգի մատենագիրներու հեղինակութիւններ, ֆրանսերէն, իտալերէն, անգլիերէն, գերմաներէն, ուսւերէն, վրացերէն, սպանիուլերէն ինչպէս նաև ցանցաւ թուով թուրք, արար և ուրիշ լեզուներու ստորարածանումով։

Այս գործերու առանձին զբաղարանի մէջ ամփոփման նպատակը .յայտնի է, հայութեան շուրջ ուսումնասիրութեան դիրութիւն՝ թէ մեզ և ազգայիններուն և թէ օտարներուն։

Դ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ երեք մեծ ստորաժամանումով։

#### 1. Գրքեր

Հայկական Բաժնին այս առաջին մասը կը բովանդակէ շուրջ 20000 գիրք. ասալ, մանաւանդ ազգային տեսակէտով՝ պատկառելի և թանկագին հաւաքածոյ մ'է, որոն շուրջ 2000 հատորները զետեղուած յատուկ գրադարանի մէջ առաջին տեղը կը բռնին, և են հին, հազուաշփուտ. թանկացին տպագրութիւնները 1512-1750 տարիներու շրջամին՝ սկսեալ ամենէն հին և առաջիններէն (Աղթարք. Արգարեան Սաղմոս, ևն)։

Հայկ. բաժնին զրացուցակը յօրինուած է երուպական նորագոյն դիւրագործածելի ոճով: Բոլոր զրցերը խնամքով կը պահուին՝ կրելով իրենց կողքին՝ նուիրատուին անունն ալ:

#### 2. Պարբերական թերթեր.

Առողջ կը կազմեն մատենադարանիս Հայկ. Բաժնին երկրորդ ճոխ հաւաքածոն, սկսեալ հնագոյն թերթերէն (Աղջարար ևն) մինչև մեր օրերունը (1824-1926), որոնց իրեն տեսակ զրեթէ 250ի կը հասնին, և նկատելով անոնց բազմահատոր շարցը՝ մեծ զբաղարան մը կազմեն 950 ստուար հատորներով, խնամքով կազմուած և դասաւորուած այրուբենի կարգաւ։

#### 3: Լրագիրներ:

Հայկ. Բաժնին երրորդ ճիւղը կը կազմէ լրագիրներու հաւաքածոն, ասոնց տեսակներուն թիւը կը հասնի 110ի, ամփոփուած՝ 720 մեծով և ստուար հատորներու մէջ, որոնց ընդարձակ սենեակներ և սրաներ կը գրաւեն. ասոնց ալ խնամքով կազմուած և դասաւորուած են այրուբենի կարգաւ։

Ամփոփելով յիշեալներու թիւը կ'ունենանք շուրջ 92000 հատոր. ասոնց վրայ աւելցնելով Ընթերցարանինը (Ճեմարան) և այլ երկու երկրորդական գրադարանները, շուրջ 4000 հատորներով, նոյնպէս տուարալեզու և հայ գրեթերու կրկին օրինակներ՝ տրամադրելի փոխանակութեանց համար՝ 3000 հատոր օտար հրատարակութիւն, հուսւկ հին ու նոր երուպական գրքերու առատ պաշար մը առանձնական գրադարաններու մէջ՝ առանձն ընթերցման և ուսումնափրութեան համար՝ 5-6000, և 2000 մեռագիրներու թանկացին հաւաքածոն՝ կ'ունենանք իրեն վերջին և ամբողջական թիւ մը շուրջ 110000 հատոր։

\*\*\*

Այս համառոտ ակնարկէն վերջ կառ

բնոր խօսց մը և ազդ մ'է որ կ'ուղղէ վանքին Մատենաղարանի Տեսչութիւնը (ինչպէս նաև Բազմավակիպի Խմբագրութիւնը, Մանօր, Խմբ.ի) բոլոր տպարանաւերերուն, հրատարակիչներուն, խմբագրավեսներուն, հեղինակներուն որ սրբազն պարտց մը ստանձնեն ազգային այս մեծ զանձին և պարծանցին՝ յատկապէս Հայկական թաժնի հաւաքածոյին՝ զարգացման և աճման գործին ձեռնուու ըլլալու, վերապահելով և սահմանելով Միաբանութեան Մատենաղարանին ո՛ւ է հրատարակութիւն, գիրք, թերթ, լուսագիր, մինչև անգամ թուուցիկ ազդ մ'իսկ զանց շընելով։

Փայմաններն արդէն շատ անգամ յայտարարուած են ԲՈԶԾԱՎԵՐԻ միջոցով. հու զարձեալ կը կրկնենց. մէկ օրինակ մեզ առաքողին Բազմավակիպ արդէն պարտց ստանձնած է շնորհակալութեամբ ծանուցանելու մի միայն իրքեա ստացուած գիրք՝ իր մանրամասնութիւններով (հեղինակ, տպարան, զին, տարեթիւն են)։

Երկու օրինակ առարջին՝ պարտական կը մնանց զրաֆիսականն ընելու կարծեմ թէ երկու պայմաններն ալ գոհացուցիչ են ամենուն, մտածելով որ Բազմավակիպ բազմաթիւ օրինակները որ կը սփոռուին ընենուկին մինչև Զինատան, Սումատրա, մինչև Քալիֆորնիա, մինչև Պրազիլ, Արճենթիւնա, մինչև Սահարա, Եթովպիա, և Քոնկորի Խորերը՝ լաւագոյն միջոցն են իրքեա ազդ հաշակելու հեղինակութիւն և տպագրութիւն։

Խսկ ազ որ յիշեալ երկու պայմանները չ'ընդունիր, կը խնդրենց զարձեալ ջերմապէս որ միշտ և անհրաժեշտ մէկ օրինակ վերապահէ մեր Մատենաղարանին, և մենց պատրաստ ենց զայն ստանալ զնով։

կամ ի պարագային փոխանակութեամբ մեր արդի հրատարակութեանց. զնման պարագային անշուշտ Բազմավակիպ պարտց չունի ո՛ւ և է ծանուցման կամ հրատարակութեան։

Զանազան պարագաներ և շարժամիթներ կը դրդին զմեզ միշտ խոճմատօրէն ընել մեր հաւաքածուն, և պակասները լրացնելով օր ըստ օրէ ամենել զայն։ առ այս կը հրավիրենց որ բոլոր մեր ազգայինները բարեհաճին ձեռնուու ըլլալ։ որպէս զի կատարեալ ըլլայ այս ազգային մտաւորական հարստոթեան կոթողը, որ շատ ցիշ նմաններ ունեն. միւս կողմանէ նկատուով լրջօրէն ազգային բաղացական դիրքը, զարդության տիուու պապան (յիշելով չըացած մձ զաղութեները Լեհաստանի, Հանգարիոյ, Խալիոյ են) և աղջունները՝ որոնց միշտ հայութեան և իր մտաւոր հարստոթեան բնաշնջումն դարանակալ են։ Հոսկ խոնի պարտց կը համարինց յիշել և յիշեցնել հայ հանրութեան որիցէ պարագայ մ'ալ, այս է Հ. Ա. Վ. Ղազիկեան մեր միաբանակից վաստակաւոր Հօր Հայկական Մատենագիտութեան գործը. Գործ մը որցան հսկայ, հայութեան պատուարեր և օգտակար նոյնքան տամանելի և անտանելի, երբ մանաւանդ մտածուի ։ որ այս օրերու վերսկսած գործն արդէն լրացած էր և ազգիս մարտիրոսութեան հետ հսկայ գործին կէսն ալ զոհ զնաց, որով ազգայիններու անհրաժեշտ գործակցութիւնը զրցերու առացումով ոչ միայն գործին յաջողութեան և կատարելութեան պիտի նպաստէ՝ այլ նաև անկէ առաջ խրախուս պիտի ըլլայ արիութեամբ ի գուփի հանելու ազգային մատենագրութեան փառահեղ կոթողը։

Հ. ԵՎԱ. ՓԵԱԿԱՆԱ